ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2288-Ա «09» հունիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի Հ.1868-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով.

1.Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 14-ի «Երևան քաղաքի Նոր Նորք, Մալաթիա-Սեբաստիա, Աջափնյակ, Շենգավիթ, Էրեբունի, Նուբարաշեն, Ավան, Նորք-Մարաշ վարչական շրջանների մի շարք փողոցներում հասարակական տրանսպորտի նոր կանգառատեղեր սահմանելու և հին կանգառները վերականգնելու մասին» հ.1868-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) հ.5 հավելվածի ցանկի 12-րդ տողը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

- «Մուրացան փողոց, հ.98 հասցեի հանդիպակաց ճանապարհահատված,
Մուրացան փողոց, հ.97 հասցեի հանդիպակաց ճանապարհահատված,
Մուրացան փողոց, հ.44 հասցեի հանդիպակաց ճանապարհահատված,
Մուրացան փողոց, հ.47 հասցեի հանդիպակաց ճանապարհահատված».

2) հ.8 հավելվածի ցանկի 2-րդ տողը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

-«Գարեգին Հովսեփյան փողոց, հ.22/4 հասցեի հարակից ճանապարհահատված».

3) հ.8 հավելվածի ցանկի 4-րդ տողը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

-«Այծեմնիկ Ուրարտուի փողոց, հ.142 հասցեի հարակից և հանդիպակաց ճանապարհահատված».

4) հ.8 հավելվածի ցանկը լրացնել 6-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Սարգիս Բաղդասարյան փողոց,

-Սարգիս Բաղդասարյան փողոց, հ.82 հասցեի հարակից և հանդիպակաց ճանապարհահատված»:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

3.Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Ս.Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ